

**ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 24.03.2025 թ. կայացած նիստի թիվ 11 արձանագրություն**

Օրակարգ

1. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատում:
2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլանների հաստատում:
3. 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսանողական հարցման արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի թիվ 11 նիստին 36 անդամներից ներկա էին 24-ը: Ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատմանը: Դեկանը ներկայացրեց բակալավրիատի ու մագիստրատուրայի առաջին և երկրորդ ընթացիկ քննությունների ժամանակացույցը, և հավելեց, որ կիսամյակի քննաշրջանը ըստ ժամանակացույցի նախատեսվում է հունիսի 2-21-ը: Միաձայն քվեարկությամբ հաստատվեց 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

Այնուհետև դեկանն անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանների հաստատմանը: Նշվեց, որ կրթական ծրագրերի ուսումնական պլանները շարունակական բարելավման համատեքստում մշտապես արդիականացվում են՝ համապատասխանեցվելով արդի կրթական համակարգի, ինչպես նաև աշխատաշուկայի առաջադրած պահանջներին:

ԼՍԵՑԻՆ՝

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի առկա ուսուցման ձևով «Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն» և «Վարչագործարարական թարգմանություն» մագիստրոսի կրթական ծրագրերի համապատասխանաբար 2025-2026թթ. և 2025-2027թթ. ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Ղազարյանը նշեց «Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն»

մագիստրոսի կրթական ծրագրի 2025-2026թթ. ուսումնական պլանում նախատեսվելիք փոփոխությունները. մասնագիտական դասընթացներ կրթաբլոկի «Ինքնակարգավորման և ինքնարդյունավետության հմտություններ» դասընթացի (3 կրեդիտ, 1-ին կիսամյակ) փոխարեն նշյալ կրթաբլոկ ներմուծել «Թարգմանությունը և խմբագրումը հրատարակչական ոլորտում» դասընթացը: Փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթական ծրագիրն ուղղված է ուսանողների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը ոչ միայն թարգմանական, այլև հրատարակչական ոլորտում: Դասընթացի արդյունքում ուսանողը կտիրապետի թարգմանված տեքստի խմբագրման, սրբագրման, հրատարակման, հեղինակային իրավունքի, ինչպես նաև հրատարակչական գործի ոլորտին առնչվող հմտություններին: Նշվեց նաև այն փաստը, որ նման դասընթաց ուսուցանվում է աշխարհի մի շարք առաջատար բուհերի թարգմանական կրթական ծրագրերում:

Ինչ վերաբերում է «Վարչագործարարական թարգմանություն» մագիստրոսի կրթական ծրագրի 2025-2027թթ. ուսումնական պլանում փոփոխություններին, այս համատեքստում նախատեսվում է մասնագիտական պարտադիր կրթաբլոկի «Իրավունքի հիմունքներ» դասընթացը (1-ին կիսամյակ, 3 կրեդիտ) տեղափոխել 2-րդ կիսամյակում դասավանդվող մասնագիտացման կամընտրական դասընթացների կրթաբլոկ «Համեմատական իրավաբանություն» դասընթացի փոխարեն՝ պահպանելով կրեդիտատարությունը, իսկ մասնագիտական պարտադիր կրթաբլոկում ներմուծել «Դատաբժշկական թարգմանության հիմնահարցեր» դասընթացը (3 կրեդիտ, 1-ին կիսամյակ): Փոփոխության հիմքը ուսանողների դատաբժշկական ոլորտում թարգմանության հիմնահարցերի շուրջ ցուցաբերած հետաքրքրությունն է, ինչն իրապես արդիական է արդի լեզվաբանական թարգմանական գիտակարգի շրջանակում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի առկա ուսուցման ձևով «Թարգմանչական գործանքներն և հայերեն» և «Վարչագործարարական թարգմանություն» մագիստրոսի կրթական ծրագրերի համապատասխանաբար 2025-2026թթ. և 2025-2027թթ. ուսումնական պլանների փոփոխությունները: Որոշումն ընդունվեց միաձայն:

Անդրադառնալով օրակարգի երրորդ հարցին՝ 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի ուսանողական հարցման արդյունքների ամփոփմանը, դեկանը նշեց, որ վերոնշյալ կիսամյակի շրջանակում ուսանողների զգալի մասը մասնակցել է հարցմանը, ինչը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ տվյալների արդյունքում ստանալ գնահատման պատկեր: Դեկանն անդրադարձավ ֆակուլտետի բոլոր ամբիոնների արդյունքներին՝ գործընկերների հետ դիտարկելով և քննարկելով հարցմանն առնչվող բոլոր հարցերը:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի 517 լսարանը գերմանական բանասիրության ամբիոնի նախկին վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Յուրիկ Միշայի Գաբրիելյանի անվամբ անվանակոչելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը նշեց, որ գերմանական բանասիրության ամբիոնի նախկին վարիչ, երջանկահիշատակ Յուրիկ Գաբրիելյանի որդիները հանդես են եկել իրենց հոր՝ վաստակաշատ դոկտոր, պրոֆեսոր Յու. Գաբրիելյանի անունով լսարան բացելու և այն վերանորոգելու ու կահավորելու նախաձեռնությամբ: Լսարանը նորոգման փուլում է, ձեռք է բերվել անհրաժեշտ գույք, նախատեսվում է նաև այն համալրել էլեկտրոնային գրատախտակով: Դեկանը հավելեց, որ նորարարական տեխնոլոգիաներով ու ժամանակակից դիզայնով վերանորոգված ու կահավորված լսարանի բացումը կարևոր է ակադեմիական միջավայրի բարելավման տեսանկյունից: Գիտական խորհրդի անդամները նշեցին, որ Յու. Գաբրիելյանը ունի համալսարանական կրթական ու գիտական աշխատանքի երկար տարիների վաստակ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երաշխավորել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի 517 լսարանը գերմանական բանասիրության ամբիոնի նախկին վարիչ Յուրիկ Գաբրիելյանի անվամբ անվանակոչելու հարցը: Որոշումն ընդունվեց միաձայն:

Միաձայն քվեարկությամբ որոշեցին.

- Տպագրության երաշխավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Նարինե Լևոնի Հարությունյանի և նույն ամբիոնի ասիստենտ Սյուզաննա Աշոտի Գրիգորյանի հեղինակած «Learn English and Culture through Media: Answer Key» ուղեցույցը: Ուղեցույցում ներառված են մեդիա խոսույթին ու լեզվամշակութային գիտելիքին առնչվող առաջադրանքներ և դրանց պատասխանները: Նշվեց, որ այն իրապես օգտակար կլինի անգլերեն դասավանդողների համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ուղեցույցի լեզվանյութը կնպաստի դասավանդման արդիականացմանը ինչպես նյութի բովանդակության, այնպես էլ մեթոդաբանական տեսանկյունից:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Դալայան

24.03.2025 թ.